ԿԱՐԾԻՔ

Հովսեփյան Մելիք Հովսեփի Է.00.01 «Հայոց պատմություն» մասնագիտությամբ պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ներկայացված «Սփյուռքահայության հետ Մշակութային կապի կոմիտեի եւ Մերձավոր Արևելքի արաբական պետությունների հայ համայնքների համագործակցությունը 1964-1991 թթ.» ատենախոսության վերաբերյալ:

Հայոց Մեծ Եղեռնի և արեւմտահայութեան զանգուածային տեղահանութեան և աքսորի հետեւանքով հարիւր հազարաւոր հայեր համալրեցին աշխարհի տարբեր երկիրներու մէջ արդէն գոյութիւն ունեցող հայկական համայնքները: Այս համայնքներուն մէջ իրենց իւրայատուկ դերն ու տեղը ունին Մերձաւոր Արևելքի արաբական երկիրներուն մէջ հանգրուանած հայ գաղթականները: Վերջիններուս առանձնայատկութիւնն այն է, որ անոնք կ'ապրին ու կ'արարեն այլակրօն, օտար միջավայրի մը մէջ, ուր անդադար և տարբեր ասպարէզներու մէջ, հարկադրուած են պայքարիլ և յաղթահարել բոլոր տեսակի բնական կամ արհեստածին խոչընդոտները՝ հետապնդելով մէկ նպատակ միայն. դարերով կերտած ազգային ինքնութիւնն ու դիմագիծը անխաթար պահել օտարութեան մէջ առկայ ծով գայթակղութեանց մէջ: Այս նպատակը իրագործելու համար, վերոյիշեալ համայնքներուն ազգային և հոգեւոր ղեկավարութիւնները ջանք ու եռանդ չխնայեցին որպէսզի Մայր Հայրենիքին տեսլականը դրոշմուի և մշտապէս վառ պահուի օտար ափերուն հարկադրաբար բնակութիւն հաստատած իրարայաջորդ սերունդներու հոգիներուն մէջ: Հետեւաբար, Մայր Հայրենիքէն ստացուած որեւէ «խաբրիկ» լոյսի ու յոյսի շող մըն էր այս հայրենազրկուած ժողովուրդին համար:

Առ այդ, Սփիւռքահայութեան հետ Մշակութային Կապի Կոմիտէի ստեղծումը և հետագայ գործունէութիւնը, իր որոշ բացասական կողմերով հանդերձ, որուն նուիրուած է ներկայ ատենախօսութիւնը, յիրաւի, մեծ իրադարձութիւն էր թէ՛ Խորհրդային Հայաստանի և թէ՛ Սփիւռքի կեանքին մէջ, որով հայրենիք-սփիւռք կապը աւելի համակարգուած բնոյթ ստացաւ:

Ըստ ատենախօսին, Կոմիտէն իր գործունէութեան 30 տարիներու ընթացքին հետամուտ եղաւ կապեր հաստատելու արտերկրի մէջ գտնուող համայնքներուն հետ, ծանօթացնել զանոնք հայրենիքին կեանքը, ձեռքբերումները, նուաճումները գիտական ու մշակութային ոլորտներուն մէջ: Նաեւ խորհրդային բնակչութիւնը իրազեկել սոյն համայնքներուն տարատեսակ կազմակերպութիւններուն, ձուլման դէմ պայքարի և հայրենիք-սփիւռք յարաբերութիւններուն զարգացման աշխատանքներուն մասին:

Ուրեմն, այս նպատակը իրագործելու համար, անհրաժեշտ էր կապեր հաստատել համայնքային հասարակական «առաջադեմ» կազմակերպութիւններուն, բարեգործական ու մշակութային միութիւններուն հետ, տարածել հայրենիքի մէջ լոյս տեսնող թերթերը, առաքել գիտական-մշակութային խումբեր, հայրենիք հրաւիրել սփիւռքահայ պատուիրակութիւններ և աջակցիլ զբօսաշրջիկներուն և այլն:

Յիշատակութեան արժանի է, որ իր հիմնադրութեան առաջին երկու տասնամեակներուն վերոյիշեալ նպատակներով գործելէ ետք, Կոմիտէն 1988 թուականի Սպիտակի երկրաշարժէն ետք իր հիմնական գործունէութիւնը ուղղեց աղէտի գօտիի վերականգնումին համար Սփիւռքի աջակցութիւնն ապահովելու աշխատանքներուն:

Ներկայացուած ատենախօսութիւնը բաղկացած է ներածութենէ, երեք գլուխէ, եզրակացութենէ և օգտագործուած աղբիւրներու և գրականութեան ցանկէ:

Ներածութեան մէջ հեղինակը կը հիմնաւորէ թեմայի գիտական նշանակութիւնը և արդիականութիւնը, ուսումնասիրութեան նպատակը և խնդիրները, ժամանակագրական և աշխարհագրական շրջանակները, ինչպէս նաեւ աշխատանքի գիտական նորոյթը, մեթոդաբանութիւնը և վերջապէս օգտագործուած աղբիւրներն ու գրականութիւնը (էջ 3-15):

Առաջին գլուխի առաջին ենթագլուխը վերնագրուած է «*Հայրենիք-սփյուռք կապերի վերականգնումը Երկրորդ աշխարհամարտից հետո և Սփյուռքահայության հետ մշակութային կապի կոմիտեի ստեղծում*», ուր ներկայացուած է ԽՍՀՄ-ի ղեկավարութեան՝ հայկական սփիւռքի նկատմամբ եղած փոփոխութիւնը, որուն արդիւնքը եղաւ Արտասահմանեան երկիրներուն հետ մշակութային կապի հայկական ընկերութեան

ստեղծումը 1944 թուականին: Համառոտակի ներկայացուած են Ընկերութեան գործունէութեան նպատակները, հիմնական ուղղութիւնները, ինչպէս նաեւ արժեւորուած է կատարած աշխատանքը հայրենիք-սփիւռք յարաբերութիւններու գործին (էջ՝ 17):

Ատենախօսը կը նշէ, որ վերջին 100 տարիներուն, հայրենիք-սփիւռք յարաբերութիւնները երկկողմ մեծ կարեւորութիւն ունեցած են: Այս նպատակը իրագործելու համար ստեղծուած են պատասխանատու մարմիններ, որոնք աջակցած են այդ կապերու զարգացման, հայապահպանութեան ծրագիրներուն իրականացման և այլն: Այդ մարմիններուն մէջ աշխատանքներու բազմազանութեամբ իր ուրոյն տեղն ունի 1964 թ. ստեղծուած Սփիւռքահայութեան հետ մշակութային կապի կոմիտէի 30 տարիներու գործունէութիւնը:

Այնուհետեւ, ատենախօսը կը ներկայացնէ Կոմիտէի ստեղծման (1964 թ.) գործընթացը, խորհրդահայ մտաւորականութեան մասնակցութիւնը և որդեգրած նպատակներն ու խնդիրները և կարեւոր այլ իրողութիւններ (էջ՝ 19) :

Հակառակ Կոմիտէի վարած խտրական քաղաքականութեան համայնքներուն մէջ գործող կազմակերպութիւններուն նկատմամբ, վերոյիշեալ կոմիտէի ստեղծումը, որոշ վերապահումներով, ողջունուեցաւ և բարձր գնահատանքի արժանացաւ սփիւռքահայ անուանի գրողներու կողմէն ինչպէս՝ Համաստեղ, Լեւոն Զաւէն Սիւրմէլեան, Բենիամին Նուրիկեան, նաեւ հայրենի մտաւորականներ՝ Մարտիրոս Սարեան, Պարոյր Սեւակ, Սիլվա Կապուտիկեան, Գէորգ Էմին և այլն: Անոնք վստահ էին, որ երկկողմ յարաբերութիւնը զարկ պիտի տար հայ մշակոյթի տարածմանը և ամրապնդէր մեր ժողովուրդի հոգեկան միասնութիւնը (էջ՝ 19):

Ատենախօսութեան երկրորդ գլուխը կը բովանդակէ Լիբանանի և Սուրիոյ պետութիւններուն հայ համայնքներուն հետ Կոմիտէի համագործակցութեան խնդիրները, ընդհանրացնելով այն հիմնական կազմակերպչական և գաղափարախօսական խնդիրները և խոչընդոտները, որոնց կ'առնչուէր Կոմիտէն սոյն համայնքներուն հետ իր յարաբերութիւններուն մէջ: Անդրադարձ կատարուած է նաեւ խորհրդային ղեկավարութեան կողմէ յարուցուած կազմակերպչական խնդիրներուն,

զաղափարաբանական սահմանափակումներուն, իրաքանչիւր համայնքի մէջ տիրող իրավիճակին և վերջապէս մերթընդմերթ տարածաշրջանի մէջ տիրող իրավիճակի սրուող լարուածութեան (էջ՝ 56) :

Հասկնալի պատճառներով Լիբանանին վերապահուած է այս գլուխի (Առաջին ենթագլուխ) գերակշիռ մասը ելլելով այնտեղ տիրող իրավիճակի առանձնայատկութենէն, ինչպէս նաեւ նկատի ունենալով այն պարագան, որ Կոմիտէի ստեղծումէն հազիւ 10 տարի ետք քաղաքացիական պատերազմը պիտի մեկնարկէր այդ երկիրի տարածքին, բացասական ազդեցութիւն թողնելով համայնքի ազգային-հասարակական գործունէութեան վրայ: Հետեւողականօրէն լուսաբանուած է այն հսկայածաւալ միջոցառումներու ծրագիրը, որ իրականացուած է Կոմիտէի կողմէն աղէտեալ լիբանանահայութեան աջակցելու, որքան որ հնարաւոր էր խորհրդային կարգերու առկայութեան: Նշուած են նաեւ թուային և բովանդակային տուեալներ Կոմիտէի աջակցութեամբ խորհրդահայ բուհերուն մէջ ուսանող լիբանանահայ երիտասարդներու, ինչպէս նաեւ Խորհրդային Հայաստանի մէջ վերապատրաստման դասընթացներու մասնակցած լիբանանահայ ուսուցիչներու և խորհրդահայ ճամբարներուն մէջ հանգիստ անցուցած պատանիներուն մասին և այլն (էջ՝ 56-80):

Այս գլուխի երկրորդ ենթագլուխը վերապահուած է «*Մայր գաղութ»ի՝ սուրիահայ համայնքին,* ուր ներկայացուած է Կոմիտէի գործունէութեան 30 տարիներու շրջանին համայնքի կառուցուածքը, այնտեղ գործող կազմակերպութիւնները և Կոմիտէի վերաբերմունքը այդ կազմակերպութիւններուն: Ատենախօսը ճշգրտօրէն շեշտած է այն պարագան, որ Կոմիտէն խտրական քաղաքականութիւն կը վարէր համայնքը բաժնելով «առաջադիմականներու» և «հետադիմականներու», որմէ բնականաբար պիտի տուժէր համայնքի միասնական ոգին: Նշուած է նոյնպէս Կոմիտէի միջոցաւ Խորհրդային Հայաստանէն Սուրիա և հակադարձ ուղղութեամբ տեղի ունեցած փոխայցելութիւնները, ինչպէս նաեւ սուրիահայ համայնքի Կոմիտէի օգնութեան ձեւերը: Վերջապէս, սուրիահայ համայնքի առումով, յստակեցուած են Կոմիտէի աջակցութեամբ Երեւանի բուհերուն մէջ ուսանած այս համայնքի երիտասարդներու, Խորհրդային Հայաստանի մէջ

վերապատրաստուած ուսուցիչներու և ճամբարներուն մէջ ամառնային հանգիստը անցուցած պատանիներու թուաքանակը և բովանդակային տուեալները (էջ՝ 81-101):

Իսկ Երրորդ գլուխի տակ համադրուած են *Իրաքի, Քուվեյթի, Հորդանանի և Եգիպտոսի հայ համայնքները Սփիւռքահայության հետ մշակութային կապի կոմիտեի ծրագիրներուն մէջ*. Ներկայացուած են այս համայնքներուն մէջ Կոմիտէի գործունէութեան շրջանին առկայ իրավիճակը, այնտեղ գործող կառոյցներն ու կազմակերպութիւնները, ասոնց նկատմամբ Կոմիտէի վերաբերմունքը (առաջադիմականներ և հետադիմականներ), փոխայցելութիւնները, իրականացուող ծրագիրները և այլն: Առանձին ենթագլուխ մը նուիրուած է Քուվէյթի նորաստեղծ համայնքին հետ կապերու քննութեան, ամրապնդման և Կոմիտէի հետ համագործակցութեան: Ըստ համայնքներու լուսաբանուած են Կոմիտէի աջակցութեամբ խորհրդահայ բուհերուն մէջ ուսանող երիտասարդներու, Խորհրդային Հայաստանի մէջ վերապատրաստուած ուսուցիչներու և խորհրդահայ «պիոներ» ճամբարներուն մէջ հանգիստ անցուցած, Կոմիտէի գործունէութեան տարիներուն նշուած երկիրներու հայ համայնքներէն տեղի ունեցած հայրենադարձութեան մասին (էջ՝ 102-151):

Ուսումնասիրութիւնը կ'աւարտուի եզրահանգումներով, ի մի բերելով ատենախօսութեան հիմնական արդիւնքները և դրոյթները (էջ՝ 152):

Ատենախօսը օգտագործած է Հայաստանի ազգային արխիւի փաստաթուղթերը, յատկապէս Կոմիտէի, ինչպէս նաեւ Մերձաւոր Արևելքի արաբական պետութիւններուն մօտ հաւատարմագրուած ԽՍՀՄ դիւանագիտական ներկայացուցչութիւններու տարբեր տարիներու տեղեկանքները սփիւռքահայ համայնքներուն վերաբերեալ, Կոմիտէի գործունէութեան տարեկան ծրագիրները, հաշուետուութիւնները, պաշտօնական գրագրութիւնը և այլն: Օգտագործուած են նաեւ որոշ տպագիր փաստաթուղթերու ժողովածուներ, խորհրդահայ և սփիւռքահայ պարբերականներ:

Վերոյիշեալ արժեւորումներէն բացի՝ աշխատանքը զերծ չէ կարգ մը բացթողումներէ և վրիպակներէ, որոնցմէ նշենք հետեւեալները.

1- էջ 40 – Ատենախօսը կը նշէ «...Խօսվում է այն մասին, որ երկրաշարժից հետո Լիբանանից, Սիրիայից և Քուվեյթից ժամանել են պատվիրակություններ, որպեսզի

քննարկեն հանգանակված օգնության բաշխման աշխատանքները»: Իրաքի պատուիրակութեան մասին ոչ մի ակնարկ: Այս առթիւ տե՛ս Իրաքի առաջնորդ Աւագ սրբազան հօր քարոզը Ս. Էջմիածնի Մայր Տաճարի մէջ Յունուար 1989 թ.ին, ի ներկայութիւն Ամենայն Հայոց կաթողիկոս Վազգէն Ա.ի, ուր սրբազանը կը ներկայացնէ սոյն պատուիրակաթեան առաքելութիւնը և հանգանակած օժանդակութիւնը: «Էջմիածին» Յունուար 1989 էջ Ա 35:

2- Էջ՝ (42-43) էջերուն կը կարդանք 1989 թ. և այնուհետեւ 1990 թ. Կոմիտէի որդեգրած նոր սկզբունքներուն մասին, որոնք գործնականի վերածելու համար դարձեալ նիստ կը գումարուի և կը ծրագրուի գործունէութեան նոր փաթեթ 7 կետերէ բաղկացած: Հետաքրքրական է արդեօք յիշուած կետերէն ո՞ր մէկը իրականութիւն դարձաւ Կոմիտէի գործունէութեան շրջանին:

3- Էջ՝ 50 – Անդրադառնալով հայրենադարձութեան հարցին՝ ատենախօսը կը յիշատակէ, որ Հայաստանի բոլշեւիկեան կուսակցութեան կեդրոնական կոմիտէի նախագահութեան 1922 թ., Ապրիլի 13-ի նիստի որոշմամբ՝ հայրենադարձութիւն կազմակերպելու պարագային «...սփյուռքահայերը բաժանվում էին երեք խմբի՝ «դաշնակներ», «դաշնակներից հեռացածներ՝ չեզոքներ» և խորհրդային կարգերը համակրողներ: Նրանցից միայն վերջին երկուսին թույլատրվում էր հայրենադարձվել և հաստատվել Խորհրդային Հայաստանում»:

Այս մօտեցումը լիովին կը համապատասխանէ անցեալ դարու 40-ական թուականներուն տեղի ունեցած երկրորդ ներգաղթի պարագային:

Իսկ առաջին հայրենադարձութեան պարագային, արդար ըլլալու համար նշենք, որ 1921 թ.ի Հոկտեմբեր ամիսէն սկսեալ մինչեւ 1922 թուականի Յունուար ամիսը 8000 հայեր 3 նաւերով Իրաքէն մեկնեցան Հայաստան: Իսկ 1925-1926 թուականներուն (ԿԿ.ի նշուած նիստի թուականէն 3-4 տարի անց) Հայաստան ներգաղթեցին եւս 1000 անձ ցամաքի - Պարսկաստանի ճամբով, նախապէս թոյլտուութիւն ստանալով Թեհրանի մէջ ՀԽՍՀ լիազօր ներկայացուցիչ՝ Ս. Առաքելեանէն: Այս հայրենադարձութիւնը իր լրումին հասցնելու համար մեծ դերակատարութիւն ունեցաւ Միջագետքի Գաղթականութեան

Կոմիտէի նախագահ՝ «դաշնակ» Լեւոն Շաղոյեանը, որ անկասկած անձանօթ դէմք մը չէր Խորհրդային Հայաստանի իշխանութիւններուն և իր ղեկավարած համայնքի ստուար հատուած մը առնուազն դաշնակցականամէտ էր եթէ ոչ շարքային դաշնակցական:

4- Էջ՝ 63 – Այստեղ ատենախօսը կը յիշատակէ «...Կոմիտեի հետ 1965 թ. գրական թեմայով կապի մէջ է եղել նույնիսկ ՀՅԴ- յայտնի գործիչ Կ. Սասունին, որը այդ տարիներին եզակի օրինակ էր»: Այո, եզակի օրինակ էր «հետադիմական» տարրի մը հետ կապի մէջ մտնելը: Այնուամենայնիւ, համապատասխան անդրադարձը և լուսաբանումը կը բացակայի ատենախօսին կողմէն: Հետաքրքրական է իմանալ գրական թեմայի էութիւնը: Արդեօք դրական թէ բացասական ազդեցութիւն ունեցաւ Կոմիտէի յետագայ գործունէութեան վրայ համայնքի հետ երկկողմ յարաբերութեանց մէջ:

5- Էջ՝ 104 – Ատենախօսը՝ հիմնուելով Խորհրդային դիւանագիտութեան տարբեր ներկայացուցչութիւններուն կողմէ պատրաստուած տեղեկանքներուն վրայ կը նշէ. «... Մինչև Իրաքում 1958 թ. հուլիսի 14-ի հեղաշրջումը համայնքում գործել են ազգային կուսակցություններ...»:

Իրաքի մէջ ոչ մի ազգային կուսակցութիւն գործած չէ բացառութեամբ Հայ Յեղափոխական Դաշնակցութեան, որու հիմնադիրը եղած է ազգային հերոս Լեւոն Շաղոյեանը 1926 թուականին:

- Էջ՝ 104 - Այստեղ կը կարդանք. «...1963 թ. հաստատվեցին Իրաքի հայ համայնքի մասին օրենքն ու գործունեության կանոնագրերը, որոնք գործում են մինչեւ օրս...»: Յղումը Ս. Օհանեանի գիրքին էջ 131:

Ատենախօսը չի նշեր, որ նոյն աշխատութեան 132-րդ էջին յստակ կը նշուի, որ գաղթականութեան Իրաք հանգրուանելէն ետք, հայ համայնքի համար Իրաքի մէջ գործող օրէնքը (1863 թ. Ազգային Սահմանադրութիւնը, որ կը գործէր Օսմանեան տիրապետութեան տակ գտնուող բոլոր համայնքերուն մէջ, ներառեալ Իրաքի հայ համայնքը) ժամանակավրէպ ըլլալով՝ 1930 թ., թիւ 880 օրէնքը կը մշակուի առաջնորդարանի և նախարարաց խորհուրդի համաձայնութեամբ: Իրաքի

խորհրդարանի հաստատումով՝ 1931 թ., թիւ 70 օրէնքը և կանոնագրութիւնը ուժի մէջ կը մտնէ պաշտօնաթերթի մէջ հրապարակուելէն ետք: Իսկ 1958 թ. զինուորական յեղաշրջումէն ետք, կառավարական համակարգի փոփոխութեամբ՝ (միապետական կարգերէ անցնելով հանրապետականի) նախկին օրէնքը չեղեալ կը համարուի և 1963 թ. նոր թիւ 87 օրէնքը և կանոնագրութիւնը լոյս կը տեսնէ Իրաքի Հայ Օրթոդոքս համայնքին համար, որ հերթական անգամ փոփոխութեան կ'ենթարկուի 2005 թ.: Վերջինս կը գործէ ցայսօր:

6- էջ՝ 105 – Կը յիշուի Իրաքի Հ.Բ.Ը.Մ. մասնաճիւղի հիմնադրութեան թուականը որպէս 1960-ը:

Հ.Բ.Ը.Մ Իրաքի մէջ հիմնադրուած է Յուլիս 1911 թ., ծաւալելով ազգանուէր գործունէութիւն, սատարելով յատկապէս Իրաք ապաստանած արեւմտահայ գաղթականութեան և որբահաւաքի փրկութեան աշխատանքներուն: 1948 թ. ժամանակաւորապէս կը դադրի գործելէ մինչեւ 1958 թ.ի զինուորական յեղաշրջումը: 1959 թ. կը վերակազմուի «Իրաքի Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութիւն» անուան տակ:

7- էջ՝ 105 – Պաղտատի Ազգային Սվաճեան վարժարանը հիմնուած է 1921 թ. և ոչ 1918 թ., ինչպէս յիշուած է ատենախօսութեան մէջ, քանզի 1918 թ. գաղթականութիւնը տակաւին Պաքուբայի գաղթակայանը կը գտնուէր:

8- էջ՝ 126 – Ատենախօսը կը յիշէ Յորդանանի Ռամկավար Ազատական Կուսակցութեան կառոյցի փլուզման գործընթացի սկիզբը, որպէս 1954 թ. մինչեւ վերջնական կազմալուծումը 1969 թ.:

Պատճա՞ռը այս հեղինակաւոր կառոյցի փլուզման, մանաւանդ որ կազմալուծման թուականը կը զուգադիպէ Կոմիտէի ստեղծման և գործունէութեան տարիներուն:

էջ՝ 141 – Եգիպտոսի մասով ատենախօսը վստահօրէն կը նշէ, որ «...վարժարաններում դասընթացները կազմակերպվում էին պետական ծրագրով, բայց ազատ ուսուցանվում էին հայագիտական առարկաները: Երեք վարժարաններին կից գործում էին մանկապարտեզներ»:

Ո՞ր ուսումնական տարեշրջաններուն մասին է խօսքը, և արդեօք հայոց պատմութիւն առարկան մաս կը կազմէ՞ր «ազատորեն» դասաւանդուող առարկաներու շարքին, քանզի Նասըրի (1952 թ.) իշխանութեան գալէն ետք խիստ սահմանափակուած էր ազգային/կրօնական փոքրամասնութիւններուն պատկանող դպրոցներուն մէջ դասաւանդուող հայագիտական առարկաներու ուսուցումը, յատկապէս հայոց պատմութիւն առարկան:

9- Իբր գլխաւոր սկզբնաղբիւր օգտագործուած են վերոյիշեալ երկիրներուն մէջ Խորհրդային Միութեան դեսպաններուն կամ հիւպատոսներուն տեղեկանքները, որոնք, դժբախտաբար, ոչ բոլոր դէպքերուն հաւաստի աղբիւրներ էին և չէին համապատասխաներ իրականութեանը:

Աշխատութեան գերակշիռ մասը հիմնուած է նշուած տեղեկանքներուն վրայ, որոնք առկայ են Ազգային արխիւի ֆոնտերուն մէջ, յատկապէս թիւ 875 Ֆոնտը իր բազմաթիւ ցուցակ-գործերով: Աշխատանքը մեծապէս պիտի շահէր եթէ յիշեալ տեղեկանքներու բովանդակութիւնը համեմատութեան դրուէր իւրաքանչիւր համայնքի ազգային առաջնորդարանին կողմէն հրատարակուած նիւթերուն հետ, նաեւ սփիւռքի մէջ լոյս տեսնող մամուլի էջերուն, ապա ներկայացուէր որպէս փաստազրուած իրականութիւն:

11 –Եւ վերջապէս. Սփիւռքը շատ բարդ կառուցուածք ունի, բազմազան է և բազմաշերտ ոչ միայն կուսակցական պատկանելիութեամբ, այլ մայր հայրենիքի տարբեր բնակավայրերէն բռնազաղթուած և հարկադրաբար «նոր հայրենիք» կերտած խմբաւորումներով, տարբեր յարանուանութեանց պատկանող համայնքներով, որոնցմէ իւրաքանչիւրը ունի իր ուրոյն պատմամշակութային անցեալը, իր սովորութիւնները, գաւառային բարբառը և այլն: Հետեւաբար, հարկաւոր է սփիւռքի իւրաքանչիւր համայնք ուսումնասիրել վերոյիշեալ նկատառումներով, յատկապէս երբ խօսքը ցեղասպանութիւնը վերապրած առաջին և երկրորդ սերունդներու ազգային-հասարակական գործունէութեան մասին է, ինչպէս ներկայ աշխատութիւնն է:

Յուսով ենք, որ վերոնշեալ թերութիւնները և ակամայ բացթողումները նկատի պիտի առնուին ատենախօսի կողմէն իր յետագայ գիտական աշխատանքներուն մէջ:
Ներկայ աշխատութիւնը կը բաւարարէ թեկնածուական ատենախօսութիւններուն ներկայացուող պահանջներուն:
Հեղինակի հրատարակած սեղմագիրի մէջ ամբողջութեամբ արտացոլուած է ատենախօսութեան բովանդակութիւնը:

Եզրակացութիւն.- Պատմական գիտութիւններու թեկնածուի գիտական աստիճանի հայցման ներկայացուած Հովսեփյան Մելիք Հովսեփի «Սփյուռքահայութեան հետ մշակութային կապի կոմիտեի և Մերձաւոր Արևելքի արաբական պետությունների հետ համայնքների համագործակցությունը 1964-1991 թթ.» ատենախօսութիւնը կը համապատասխանէ գիտական աշխատանքի պահանջներուն և կը միջնորդենք մասնագիտական խորհուրդի անդամներուն, որպէսզի Հովսեփյանին շնորհուի Է.00.01 «Հայոց պատմութիւն» մասնագիտութեամբ պատմական գիտութիւններու թեկնածուի գիտական աստիճան:

Պատմական գիտութիւններու թեկնածու

Սեդա Տաճատ Օհանեան

20 Փետրուար, 2020

պ.գ.թ. Սեդա Օհանեանի ստորագրութիւնը հաստատում եմ

ՀՀ ԳԱԱ պատմութեան ինստիտուտի գիտական քարտուղար
Պատմական գիտութիւնների թեկնածու, դոցենտ Մուրադյան Հ.Ղ.

20 Փետրուար, 2020